



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 2 ՄԱՅԻՍ, 2022

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚ս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 34


ԳՈՂՈՒԹԻԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Անդադար Տէրը պիտի օրհնաբանեմ.  
անոր օրհներգութիւնը շրթներուս վրայ պիտի ըլլայ շարունակ:  
Տէրն է միակ պարծանքս.  
Եւ Տիրոջ դիմեցի, եւ աղօթքիս պատասխանեց,  
վիս ազատեց բոլոր վախերէս:  
Տիրոջ մօտեցեք, որպէսզի ուրախութեամբ ճառագայթեք,  
եւ յուսախաբ չեք ըլլար բնաւ:  
Ճաշակեցեք, եւ տեսեք՝ թէ ինչքան քաղցր է Տէրը.  
Երանի անոր՝ որ Տիրոջ կ'ապաւինի:  
Հզօրագոյն մարդիկն իսկ կարօտութեան  
եւ անօթութեան կրնան մատնուիլ,  
սակայն Տիրոջ դիմողները բանի մը կարօտ պիտի չմնան:  
Եկեք, որդեակներ, մտիկ ըրեք ինձի,  
եւ ես ձեզի սորվեցնեմ՝ թէ ինչ է Տիրոջ վախը:  
Կ'ուզե՞ս երկար կեանք ունենալ,  
կ'ուզես բարօր օրեր տեսնել.  
Լեզուդ չարախօսութեան մի ծառայեցներ,  
շրթներդ բնաւ թող նենգութիւն չխօսին:  
Հեռու մնա չարիքէն, եւ բարիք ըրէ,  
խաղաղութիւն կամեցիր եւ վայն հեփապնդէ:  
Տիրոջ աչքերը արդարներուն վրայ կը հսկեն,  
ականջները միշտ պատրաստ են անոնց աղաչանքը լսելու:

### ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատուր Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Զրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի փութ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի փան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

**ՕՐՈՒԲԱՆ ՆԻԲԹԸ**  
  
**ԱՌԱԿԱՑ 28 ԳԼՈՒԽ**

**ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ 28:15-22**

Կը շարունակենք: Որքան անհրաժեշտ ու կարեւոր է երկրի մը ղեկավար դասը: Ահա ճիշդ այդ պարճառով էր որ Աստուած երբ Իսրայելի ժողովուրդը դուրս բերաւ Եգիպտոսի սարկութենէն, ուզեց սորվեցնել ու յիշեցնել, որ իրենք պէտք է իրենց համար թագաւոր ճանչնան Տէր Աստուած, եւ եթէ մէկը պիտի նշանակուի որպէս ներկայացուցիչ, պէտք է որ այդ անձը ըլլայ աստուածավախ, Աստուծոյ երկիրողով ապրող ու կառավարող, այլապէս կը նմանի մռնչող առիւծի եւ անյագ արջի, որ իշխան է կարգուած աղքատ ժողովուրդին վրայ: Այնպէս ինչպէս մռնչող առիւծի եւ կամ անյագ արջը չի խնայեր, այնպէս ալ ամբարիշտ իշխանը չի խնայեր իր ժողովուրդին 15 հմր: Նոյնպէս ալ խոհեմութիւն չունեցող իշխանը գրկանք է որ կ'ընէ: Մինչ ազահութենէ զգուող իշխանը իր կեանքը կ'աւելցնէ: Որովհետեւ ի վերջոյ այս բոլորի պարճառը, նաեւ կարելի է ըսել կու գայ ազահութենէն, ընչաքղցութենէն, որուն համար ալ ղեկավար դասը ուրիշ բան պիտի չընէ եթէ ոչ առիւծի պէս մռնչէ ու հոշոտէ, անյագ արջի պէս վնասէ, ու ժողովուրդը գրկէ:

17 հմր կը ներկայացնէ այն իրավիճակը, ուր արիւնապարտ մարդը, այսինքն՝ այն անձը որ արիւնի մէջ է թաթախուած, այսինքն՝ յանցապարտ, մարդասպան, այդպիսին շուտով փոսը, գուրը փախչելու, այլ խօսքով կործանուելու: Ահա այդպիսին համար կը թելադրէ որ որեւէ մէկը չպաշտպանէ: Այլ ընդհակառակը, իր արդար պարիժը ստանայ, որպէսզի անով ձեռով մը չարիքը վերնայ, այլապէս պիտի շարունակուի: Յաճախ մարդկային մեր կարեկցութիւնը կրնայ սխալ հետեւանք ունենալ:

18 հմր քարբեր քրեակի կրկնութիւն մըն է, 6 հմրին: Այսպէս կը յիշեցնէ եւ կը սրովեցնէ ըսելով. «Կարարելութեամբ քալողը փրկութիւն կը գտնէ, իսկ ծուռ մարդը, երկու ճամբով կը քալէ, անոնց մէկուն մէջ կ'իյնայ»: Կարարելութեան մէջ քալող կը նշանակէ Աստուծոյ ճամբուն մէջ քալողը, եւ մենք Հին Կտակարանէն գիտենք Աստուծոյ քուած խոսքումը, թէ ինչպէս ցոյց քուաւ երկու ճամբայ, եւ պարտիրեց ըսելով այս ճամբուն մէջ քալէ, որպէսզի կեանք ունենաս, եւ օրհնութիւնները վայելես, քակալին չհաշուած յաւիտենական կեանքի ժառանգութիւնը: Իսկ ծուռ մարդու պարագային, այն մարդն է որ իր կեանքի ընթացքը զարքուղի ձեւերով, կը զգուշացնէ, եւ առաւել յարակօրէն կ'ըսէ, թէ այդ ճամբուն մէջ ալ պիտի իյնայ:

19 հմրը աշխարասիրութեան եւ ծուլութեան հետեւանքը ցոյց կու տայ: Աշխարասէր մարդը պիտի կշտանայ, իսկ դարարկ մարդոց հետեւողը, այսինքն՝ ծոյրը, աղքատութեամբ պիտի լեցուի: 20 հմրը, նախ ընդհանրապէս հաւաքարիմ մարդը օրհնութիւններ վայելող մարդն է, առաւել եւս երբ այդ հաւաքարմութիւնը Աստուծոյ Օրէնքին ու պարտիրաններուն նկարմամբ է: Բայց հարուստ ըլլալու արքորացողը, անպարիժ պիտի չմնայ, որովհետեւ այդ հարստութիւնը, մանաւանդ՝ արքորալով հարստանալը, կը նշանակէ զարքուղի ձեւերով ձեռք ձգուած հարստութիւն է, այդպիսին անպարիժ պիտի չմնայ: Կրնայ ըլլալ, որ այս կեանքին մէջ ապրի որպէս անպարիժ, բայց աւարտին անպայման հանդիպելու է այդ պարիժին:

21 հմրը կը զգուշացնէ աշտութիւն ընելէ, որովհետեւ աշտութիւն ընել նպարակի մը համար, եւ այս պարագային պարառ մը հացի, որ սակայն, մեզ կրնայ առաջնորդել յանցանքի: Յաճախ կրնայ ունենալ այդպիսի փորձութիւն կամ փորձութիւններ, ըսելու համար թէ գործ է, պարառ մը հացի համար է, բայց կրնայ այդ աշտութիւնը մեղքի ու յանցանքի առաջնորդել: 22 հմր, յիշեցում է հետեւանքի ու արդիւնքի: Չար աչք ունեցող մարդը հարուստ ըլլալու կ'արքորայ, մոռնալով որ անոր վրայ աղքատութիւն պիտի գայ: Նախ չար աչք ըսելով կը հասկնանք այն ինչ որ առիւծով մը Քրիստոս Ինք ալ յիշեցուց, որ եթէ աչքդ առողջ է, ամէն ինչ առողջ կը տեսնես, իսկ եթէ վար առողջ է, ամէն ինչ վարը: Այսպէս եւս չար աչքը կը նշանակէ, չար դիպում ունեցող, չար ծրագիրներ մտածող ու մշակող, եւ ինչ բանի համար եթէ ոչ հարստանալու, որ սակայն անոր կը սպասուի աղքատութիւն, մի գուցէ ոչ այս կեանքին մէջ, նաեւ ինչու չէ այս կեանքին: